

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առթիվ

27.05.2017



Մի րելի հայրենակիցներ:

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Մայիսի 28-ի՝ Հայաստանի առաջին Հանրապետության տոնի կապակցությամբ:

Մայիսը հայ ժողովրդի համար եղել է հաղթանակների ու նվաճումների ամիս: Այդ նվաճումներից մեկն էլ 1918 թվականին Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումն էր, հայոց պետականության հաստատումը՝ պետականության յոթդարյա կորստից հետո:

Մեծ է 1918թ. մայիսի 28-ի խորհուրդը, քանզի վերագտնելով անկախությունը, հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի թոհուրոհում կենաց ու մահու պայքար մղեց երկու փլուզվող կայսրությունների փլատակների տակ մնալու վտանգի դեմ և հիմնադրեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Թեև մեր ժողովրդի պատմական կեսագրությունը եղել է նաև անկումներով, այնուամենայնիվ պատմությունն արձանագրել է մի շարք հերոսական վերելքներ, որոնցից մեկը 1918 թվականի հերոսամարտի արդյունքում ձեռք բերված պետականությունն է:

Պատմական փաստ է, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը գոյատևեց ընդամենը երկուսուկես տարի, սակայն այդ ընթացքում ստեղծված պատմական կառույցը հիմք հանդիսացավ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, որը հռչակվեց 1920թ-ին, իսկ այնուհետ՝ Հայաստանի Հանրապետության, որը հռչակվեց 1991 թվականին:

Փառք ու պատիվ մաղթենք բոլոր նրանց, ովքեր մեզ ավանդեցին այս մի բուռ երկիրը, հակառակորդին ապացուցելով, որ 1918-1920թթ. Հայաստանի առաջին Հանրապետության գոյությունը մեր ժողովրդի ոչ միայն հայրենասիրության, այլև հայրենապաշտության վկայությունն է:

Հարգելիներս, հայ ժողովրդի պատմության բոլոր ժամանակների նահատակների ու հերոսների կյանքի գնով մեզ հասած Հայաստան երկրի գորացումն ու հզորացումը մեր սերնդի գործն է՝ ի պատասխան նահատակված մեր քույր եղբայրների թափած արյան և ի լրումն նրանց կիսատ մնացած երազանքների:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս, արժանապատվության այս տոնի առթիվ: Մաղթում եմ ազգային համաձայնություն և միասնություն՝ հանուն Հայաստանի Հանրապետության: